

Սլաբերուն 1843ին շինեց անոր յատակագիծը : Clermont-Ganneau Եաֆայի մէջ գտած է բազմաթիւ կարեւոր արձանագրութիւններ : Այս վերջիններէն մին է եպիսկոպոսի քանդակագործ ճերմակ մարմարէ տապանաքարը . որմէ կը մնայ գլուխը և գաւազանը առուոյտի ձեւով աղեղի մը մէջ ագուցուած կեռճանաւոր (à crochets) խոյակներու վրայ դրուած : Խիստ զեղեցիկ հրեշտակ մը կը խնկարկէ հանդուցեալը . և տապանաքարին մնացորդը 1258 թուականը պահած է , բայց ոչ , դժբախտաբար , եպիսկոպոսին անունը :

Ուրիշ կոտրած յիշատակարան մը . ըստ երևոյթին , կը յիշէ Յրէտէրէկ Բ . կայսրը որ Եաֆայի մէջ բնակած է :

Այս քաղաքին մէջ , մինչև ժԹ . դար ցոյց կը տրուէր աւելորակները Ս . Պետրոս եկեղեցիին զոր կը յիշեն ուխտաւորները որ կը թուէր թէ , կիսարժուր պատուհաններով ըմմանական շինուածք մ'էր , տեսանելի ժԱ . դարու վիճազրութեան մը վրայ :

Ստոյգ սխալի մը հետեանքով է որ Clermont-Ganneau իբր Եաֆայի մէջ ուրուագծուած հրատարակած է ուս մը (console) որ՝ իրականին մէջ , Երուսաղէմի Ս . Յարութեան տաճարին ճակատի կողմէն Գողգոթայի դաւիթին զարդարանքներուն մասը կը կազմէ (Տե՛ս Camille Enlart. Les Monuments des Croisés dans le Royaume de Jérusalem , Հտր . Բ . էջ 134-6) :

3. Սիմոն խաղախորդի տունը , Ս . Պետրոսի եկեղեցիին աւերակներուն գիւսը եւ Տաբիդայի տունը .

Այն քրիստոնեաները որ պատեհութիւն կ'ունենան այցելելու այս քաղաքը , ցոյց կը տրուի անոնց՝ հարաւային պարսպին մնացորդէն և փարոսէն ոչ հեռի փոքր մզկիթ մը՝ որուն համար կ'ըսուի թէ Սիմոն խաղախորդին տան տեղն է : Միջին դարու յիշատակարանները ցոյց կու տան թէ Ս . Պետրոսի եկեղեցին կը գտնուէր քաղաքին հարաւային կողմը եւ հարաւ-արեւմուտքի անկիւնը : Վերջին ժամանակներս փոքր մզկիթին յարակից շէնքի մը պատը , հարաւի կողմէն , փլչելով՝ երեցան եկեղեցիի մը երկու կողակները և քանի մը պատերու մասեր , միջին դարու շինուածքով . այս գիւտը կը հաստատէ թէ սոյն եկեղեցիին ա-